Թուրքիային թույլ չեն տալիս դուրս գալ սիրիական խաղից

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 05.07.2024 թ.[1]

2024 թ. հուլիսի 1-ին հայտնի դարձավ, որ Թուրքիայի Կայսերի քաղաքում սկսվել են այնտեղ հաստատված սիրիացի փախստականների ցույցերն ու բռնությունները: Ըստ լրատվամիջոցների՝ պատճառը ազգակցի կողմից 6-ամյա սիրիացի աղջկա բռնաբարությունն է եղել: Երեկոյան անկարգությունները տարածվեցին ամբողջ քաղաքում, որոնց մասնակից երիտասարդները ավերեցին սիրիական խանութները, այրեցին մեքենաներ, ներխուժեցին բնակարաններ:

Նույն կերպ արձագանքեցին սիրիացի արաբները, իսկ հաջորդ օրը անկարգություններն ընդգրկեցին Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիսային շրջանները: Այստեղ, սակայն, հարձակման հիմնական թիրախները եղել են թուրքական նոր վարչական իշխանություններն ու Սիրիայի օկուպացված տարածքներում «Կայունության պահպանման օպերացիայի» շրջանակներում մարտական հերթապահություն իրականացնող զինվորականները: Թուրքերի վրա ամենազանգվածային հարձակումները տեղի են ունեցել Աֆրին քաղաքում, որտեղ իրական փողոցային մարտեր են տեղի ունեցել: Միաժամանակ Թուրքիայում անկարգությունների աշխարհագրությունն ընդլայնվեց: Կայսերիից անմիջապես հետո սիրիացիների դեմ բռնությունները տեղափոխվեցին նաև Կոնիա, Բուրսա և Ստամբուլ, ինչպես նաև Կենտրոնական Անատոլիայի քաղաքներ:

Իրավիճակը երկու երկրներում էլ հուլիսի 2-ի օրվա վերջին համեմատաբար կայունացել էր, սակայն, չնայած Թուրքիայի և Սիրիայի իշխանությունների ձեռնարկած միջոցներին, մթնոլորտը շարունակում է մնալ ծայրահեղ լարված:

Տեղի ունեցածը կարելի է համարել ինքնաբուխ բռնկում, որն առաջացել է շարքային թուրքերի՝ դեպի երկիր սիրիացի արաբների զանգվածային ներհոսքի փաստով կուտակված դժգոհությունից, սակայն մի շարք հանգամանքներ վկայում են կատարվածի զուտ քաղաքական, այլ ոչ թե սոցիալական նախապատմության մասին: Համենայն դեպս, դժվար թե սովորական պատահականություն համարվի, որ անկարգությունները ժայթքեցին Անկարայի և Դամասկոսի հարաբերությունների սկիզբ առնող կարգավորման գործընթացին զուգահեռ: Թուրքական *«ԱԼ Վաթան»* (*AL Watan*) հրատարակությունն առաջինն է հայտարարել սպասվելիք շփումների մասին, որոնց համաձայն՝ մոտ ապագայում իրաքյան և ռուսական կողմերի միջնորդությամբ Բաղդադում պետք է տեղի ունենան փակ բանակցություններ: Ըստ թերթի, Թուրքիան և Սիրիան Բաղդադում պետք է քննարկեն *«բոլոր մանրամասները, որպեսզի երկու*

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 04.07.2024 թ.:

հարևանների հարաբերությունները վերադարձնեն նախկին մակարդակին»: Կայսերիի իրադարձություններն էլ տեղի են ունեցել Բաղդադում սպասվող բանակցությունների մասին հայտնի դառնալուց ուղիղ մեկ օր անց:

Բացի այդ, հունիսի վերջին արաբական տելեգրամ-ալիքները, վկայակոչելով իրենց աղբյուրները, հայտնել էին, որ թուրք-սիրիական սահմանին գտնվող Հավար Կիլիս բնակավայրում թուրքական հետախուզության բարձրաստիճան ներկայացուցիչները Հյուսիսային Սիրիայի թուրքամետների խմբավորումների առաջնորդներին ասել էին, որ *«սպիպված կլինեք վայր դնել զենքերը և ենթարկվել Դամասկոսի իշխանություններին»:* Եթե այս լուրը հավաստի է, ապա այն ուղղակիորեն հաստատում է ՁԼՄ-ներում տարածված տեղեկությունն այն մասին, որ Ռ. Էրդողանը պատրաստվում է կրճատել իր ռազմական ներկայությունը Հյուսիսային Սիրիայում, գոնե այն շրջաններում, որտեղ չեն գերակշռում քուրդ բնակչությունն ու Քրդստանի բանվորական կուսակցության (PKK) հետ կապված խմբերը:

Համադրելով այս տվյալները՝ կարելի է ենթադրել, որ Անկարան, Լիբանանում իսրայելա-շիական մեծ պատերազմի նախաշեմին, ձգտում է հապճեպորեն հեռու քաշվել ռազմական գործողությունների հնարավոր թատերաբեմից (Լիբանան, Սիրիա, Իսրայել)՝ Արևմուտքի և Իրանի միջև օրըստօրե սպասվող գլոբալ առճակատման մեջ ներքաշվելու հեռանկարից խուսափելու համար: Իր կառավարման վերջին 10 տարիների ընթացքում նախագահ Էրդողանը բազմիցս հասկացրել է, որ ոչ մի դեպքում չի հանդուրժի Թուրքիայի ներգրավվածությունը Իրանի դեմ պատերազմի մեջ: Տարածաշրջանում ներկա աշխարհաքաղաքական գործընթացները հուշում են, որ Թեհրանի և Անկարայի միջև ուղիղ բախումն անխուսափելի կդառնա, եթե Թուրքիան վերջնականապես չազատվի «Սիրիայի մասնատման» ռազմաքաղաքական ծրագրերի իր մասից:

Ուստի, շատ մեծ է հավանականությունը, որ Կայսերիի իրադարձությունների և դրան հաջորդած Թուրքիայում և Սիրիայում բռնությունների բռնկումների դիրիժորները դրսի աշխարհաքաղաքական կենտրոններն են, որոնք չեն ցանկանում, որ Թուրքիան դուրս գա տարածաշրջանային հակաշիական խաղից: Ամենայն հավանականությամբ, խոսքը Վաշինգտոնի և Թել Ավիվի մասին է, որոնք ժամանակին խոհեմաբար թույլ տվեցին Էրդողանի Անկարային՝ ներխուժելով Աֆրին և սիրիական այլ շրջաններ, ինչպես նաև սահմաններ բացելով արաբ փախստականների համար, հիմնովին խճճվել սիրիական խնդրի մեջ և ուժեղացնել բախումները Թեհրանի հետ:

Հատկանշական է, որ ցույցերի ու ջարդերի ժամանակ երիտասարդները բղավում էին հակակառավարական և հակաէրդողանական կարգախոսներ: Որից կարելի է ենթադրել, որ սիրիական խնդրի վերաբերյալ կուտակված բացասական հասարակական վերաբերմունքը հեշտությամբ կարող է վերածվել ներքաղաքական օրակարգի, ինչը

լրացուցիչ խնդիր է դառնում Էրդողանի և նրա ղեկավարած թիմի համար: Սա ևս մեկ նշանակալի ազդանշան է առ այն, որ Թուրքիայի անկախությունը, որի մասին նա մշտապես խոսում է, ըստ էության, իրականում չի կարող այդպիսին համարվել, և որ Անկարայի գործողությունները չեն կարող ձեռնարկվել Մերձավոր Արևելքում Արևմուտքի ընդհանուր ռազմավարության համատեքստից դուրս: